ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊՈՂՈՍԻ *HUPER* ԲԱՂԱԴՐՅԱԼՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ
SPECIAL TOPIC: PAUL'S USE OF *HUPER* COMPOUNDS

Պողոսը հատուկ սեր ուներ նոր բառեր հորինելու՝ ստեղծելու, գործածելով հունարեն *huper* ՆԱԽԴԻՐԸ, որը հիմնականում նշանակում է «չափազանց» կամ «վեր»: ՍԵՌԱԿԱՆ (ԲԱՑԱՌԱԿԱՆ) հոլովի հետ օգտագործելիս նշանակում է «հանուն»: Նաև կարող է նշանակել «մասին» կամ «վերաբերյալ», ինչպես *peri* (տես՝ 2 Կորնթ. 8:23, 2 Թեսաղ. 2:18): ՀԱՅՑԱԿԱՆ հոլովի հետ կիրառելիս նշանակում է «վեր», «վրայով» կամ «ավելին» (տես՝ Ա. Տ. Ռոբերթսոնի *Հունարեն Նոր Կտակարանի քերականություն պատմական հետազոտությունների լույսի ներքո*, էջ՝ 625-633 /A. T. Robertson, *A Grammar of the Greek New Testament in the Light of Historical Research*/): Երբ Պողոսը ուզում էր ահտուկ շեշտադրել ինչ-որ մի գաղափար, նա կիրառում էր այս ՆԱԽԴԻՐԸ բաղադրյալ տեսքով: Հաջորդիվ տրված է Պողոսի կողմից այս ՆԱԽԴԻՐԻ հատուկ բաղադրյալ տեսքով կիրառված բառերի ցանկը՝

Ա. *Hapax legomenon* (կիրառված է միայն մեկ անգամ, այն էլ ՆԿ-ում)
1. *Huperakmos,* կյանքի ծաղկուն շրջանն անցած, 1 Կորնթ. 7:36
2. *Huperauxanō*, չափազանց շատ ավելանալ, 2 Թեսաղ. 1:3
3. *Huperbainō*, չափն անցնել կամ մեղանչել, 1 Թեսաղ. 4:6
4. *Huperkeina*, ավելին, 2 Կորնթ. 10:16
5. *Huperekteina*, չափազանց երկարացնել, 2 Կորնթ. 10:14
6. *Huperentugchanō*, բարեխոսել, Հռոմ. 8:26
7. *Hupernikaō,* մեծապես հաղթանակած, Հռոմ. 8:37
8. *Huperpleonazō*, չափազանց շատ առատության մեջ լինել, 1 Տիմ. 1:14
9. *Huperupsoō*, գերագույնս մեծարել, Փիլ. 2:9
10. *Huperphroneō*, վեհ մտքեր ունենալ, Հռոմ. 12:3

Բ. Բառեր, որոնք գործածվել են միայն Պողոսի թղթերում՝
1. *Huperairomai,* մեկին մեծարել, 2 Կորնթ. 12:7, 2 Թեսաղ. 2:4
2. *Huperballontōs*, չափից ավելին, չափազանց, 2 Կորնթ. 11:23 (ՄԱԿԲԱՑ միայն այստեղ, սակայն որպես ԲԱՑ՝ 2 Կորնթ. 3:10, 9:14, Եփես. 1:19, 2:7, 3:19)
3. *Huperbolē*, գերազանցել, արտասովոր սպառազինել, Հռոմ. 7:13, 1 Կորնթ. 12:31; 2 Կորնթ. 1:8, 4:7,17, 12:7, Գաղ. 1:13
4. *Huperekperissou*, շատ ավելին, Եփես. 3:20, 1 Թեսաղ. 3:10, 5:13
5. *Huperlian*, ամենաբարձր աստիճանի կամ գերազանց, 2 Կորնթ. 11:5, 12:11
6. *Huperochē*, գերազանցություն, վեհափառություն, 1 Կորնթ. 2:1, 1 Տիմ. 2:2
7. *Huperperisseuō*, լինել գերառատ, Հռոմ. 5:20 (ՉԵԶՈՔ ՍԵՌ, առատապես լեցված լինել, գերհագեցած, 2 Կորնթ. 7:4)

Գ. Բառեր, որոնք գործածվել եմ Պողոսի և հազվադեպ էլ ՆԿ-յան այլ հեղինակների կողմից՝
1. *Huperanō*, շատ բարձր, Եփես. 1:21, 4:10 և Եբր. 9:5
2. *Huperechō*, գերազանցություն, վեհափառություն, Հռոմ. 13:1, Փիլ. 2:3, 3:8, 4:7, 1 Պետ. 2:13
3. *Huperēphanos*, սնապարծ կամ ամբարտավան, Հռոմ. 1:30, 2 Տիմ. 3:2 և Ղուկ. 1:51, Հակ. 4:6; 1 Պետ. 5:5:

Պողոսը մեծ նախանձախնդրությամբ անձ էր. երբ ինչ-որ բաներ կամ անձիք լավն էին, նրանք շատ լավն էին, իսկ երբ վատն էին՝ նրանք շատ վատն էին: Այս ՆԱԽԴԻՐԸ թույլ է տալիս նրան արտահայտելու իր դերադրական զգացմունքները մեղքի, անձի, Քրիստոսի և Ավետարանի վերաբերյալ: